State of California — Health and Human Services
Department of Health Care Services
P.O. Box 989009, West Sacramento, CA 95798-9850

ES3

JOHN SAMPLE
1234 SAMPLE STREET
ADDRESS 2
ANYTOWN CA 90000

XX/XX/XXXX

Կարևոր վերջնական հիշեցում Ձեր «Medi-Cal»-ի վերաբերյալ

Հետևյալ օրվանից փոխվում է այն ձևը, որով Դուք ստանում եք «Medi-Cal»-ի Ձեր նպաստները. 00/00/0000

Դուք ունեք և՛ «Medicare», և՛ «Medi-Cal»: Դուք ստանում եք այս նամակը, քանի որ փոխվում է այն ձևը, որով Դուք ստանում եք «Medi-Cal»-ի Ձեր նպաստները: Այժմ «Medi-Cal»-ի Ձեր ծառայությունները, այդ թվում՝ «Long Term Services and Supports» ստանալու համար Դուք **պետք է** անդամագրվեք **«Medi-Cal»**-ի կառավարվող բուժսպասարկման որևէ ծրագրի: Այս փոփոխությունն այն նպատակով է կատարվում, որպեսզի «Medi-Cal»-ի Ձեր ծառայություններն ավելի արդյունավետ կերպով գործեն միասին: Այս փոփոխությունը չի ազդում «Medicare»-ի Ձեր ապահովագրության կամ «Medicare»-ի Ձեր բժշկին այցելելու հնարավորության վրա:

Սա **ՎԵՐՋԻՆ նամակն** է «Medi-Cal»-ի ծրագիր ընտրելիս Ձեր տրամադրության տակ եղած տարբերակների մասին:

Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ այլ ծրագիր չընտրեք, Ձեր ապահովագրությունը հետևյալ ծրագրով.

[Health Plan Name]

ուժի մեջ կմտնի 00/00/0000 -ից:

Մենք ընտրել ենք այդ ծրագիրը՝ ելնելով նախկինում Ձեր ստացած ծառայություններից և Ձեր առողջապահական կարիքներից, բայց Դուք դեռ իրավունք ունեք «Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրելու:

Այս փոփոխությունն ինչպե՞ս կազդի ինձ վրա:

«Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը՝

- կհամակարգի «Medi-Cal»-ի կողմից վճարվող Ձեր բոլոր ծառայությունները, այդ թվում՝ «Long Term Services and Supports»-ը.
- կվճարի «Medicare»-ի որոշ ծախսերի բաժնի համար.

- կվճարի «Medicare»-ի կողմից չվճարվող այլ նպաստներ, օրինակ՝ բժշկական փոխադրման որոշ ծառայությունների, որոշակի բժշկական պարագաների և որոշ դեղատոմսային դեղերի համար:

Դուք պետք է պարզեք, թե արդյոք «Medi-Cal»-ի Ձեր սպասարկողները, օրինակ՝ երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ տրամադրողները, «Medi-Cal»-ի Ձեր ծրագրի մաս են կազմում: Դուք ստիպված չեք լինի փոխել «Long Term Services and Supports» տրամադրողին:

Ի՞նչը չի փոխվելու իմ բուժսպասարկման մեջ:

«Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամագրվելը՝

- ՉԻ փոխում Ձեր «Medicare»-ը.
- ՉԻ փոխում «Medi-Cal»-ի Ձեր որևէ նպաստ.
- ՉԻ ազդում «Medi-Cal»-ի Ձեր իրավասության վրա և լրացուցիչ ծախս ՉԻ պահանջում:

Ի՞նչ են «Medi-Cal»-ի «Long Term Services and Supports»-ները:
Դրանք ոչ բժշկական ծառայություններ են, որոնք Ձեզ օգնություն են ցույց տալիս Ձեր անձնական խնամքի և աջակցության ծառայությունների կարիքների հարցում: Եթե այժմ Դուք այդ ծառայությունները չեք ստանում, «Medi-Cal »-ի Ձեր ծրագիրը կարող է հետագայում օգնել Ձեզ ստանալ դրանք, եթե Դուք բավարարեք դրանք ստանալու պահանջները:

- **«In-Home Supportive Services»-ը (IHSS)** անձնական խնամքի ծառայություններ են այն անձանց համար, ում օգնություն է հարկավոր, որպեսզի կարողանան ապահով ապրել սեփական տանը: Եթե այժմ Դուք IHSS եք ստանում, Ձեր ծառայությունները որևէ փոփոխություն չեն կրի: Դուք կարող եք պահել IHSS-ի Ձեր սպասարկողներին և կարող եք նրանց վարձել, ազատել և կառավարել:
- **«Community-Based Adult Services»-ի (CBAS)** կենտրոնները ցերեկային օգնություն, օրինակ՝ խնամք, բուժում, ժամանց և սնունդ են տրամադրում որոշ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց: Եթե այժմ Դուք CBAS եք ստանում, Ձեր ստացած ծառայությունները որևէ փոփոխություն չեն կրի:
- **«Multipurpose Senior Services Program»-ը (MSSP)** սոցիալական և բուժսպասարկումը համակարգող ծառայություններ է տրամադրում՝ 65 տարեկան կամ ավելի մեծ անձանց համար: Եթե այժմ Դուք MSSP եք ստանում, Դուք կշարունակեք ստանալ դրանք MSSP-ի Ձեր ներկա սպասարկողի կողմից: «Medi-Cal»-ի Ձեր ծրագիրը կհամագործակցի նրանց հետ, որպեսզի ավելի լավ կազմակերպի Ձեր խնամքը:
- **Ծերանոցային խնամք:** Եթե այժմ Դուք խնամք եք ստանում ծերանոցում, Դուք ստիպված չեք փոխել Ձեր ծերանոցը: Ձեր ծրագիրը կհամագործակցի Ձեր բժշկի և ծերանոցի հետ, որպեսզի ավելի լավ կազմակերպի Ձեր խնամքը:

Ես ի՞նչ ընտրություն ունեմ

- **Մնալ «Medi-Cal»-ի այն ծրագրում, որը մենք ընտրել ենք Ձեզ համար:** Եթե Դուք որոշեք, որ հետևյալ ծրագիրը
  [Health Plan Name]
  համապատասխանում է Ձեր պահանջներին, ապա ոչինչ անելու կարիք չկա: Դուք 00/00/0000-ից կընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ ծրագրում:

- **«Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրել:** Կարող եք ուսումնասիրել Ձեր շրջանում գործող ծրագրերը՝ պարզելու համար, թե արդյոք դրանցից որևէ մեկն ավելի լավ է համապատասխանում Ձեր պահանջներին:
  - Մենք Ձեզ ընտրության փաթեթ ենք ուղարկել, որը տեղեկություններ է պարունակում այն ծրագրերի մասին, որոնք Դուք կարող եք ընտրել: Ընտրություն կատարելու համար կարող եք զանգահարել «Health Care Options»՝ 1-844-580-7272 հեռախոսահամարով, կամ լրացնել, ստորագրել և վերադարձնել «Medi-Cal»-ի Առողջապահական ծրագրի ընտրության թերթիկը՝ մինչև հետևյալ ամսաթիվը. 00/00/0000: Եթե Ձեզ պետք է ընտրության փաթեթի ևս մեկ օրինակ, զանգահարեք «Health Care Options»:

Օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների համար

Եթե հարցեր ունեք «Medicare»-ի վերաբերյալ, խնդրում ենք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048:

Եթե ցանկանում եք «Medi-Cal»-ի մեկ այլ ծրագիր ընտրել և/կամ այս նամակը ստանալ մեկ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, օրինակ՝ խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված կամ Braille-ի գրատիպով, խնդրում ենք զանգահարել՝

Health Care Options

Երկուշաբթի - ուրբաթ՝ ժամը 8-ից 17-ը:

1-844-580-7272 • TTY: 1-800-430-7077

www.HealthCareOptions.dhcs.ca.gov